

Փիլիպպոսի առարկոյ՝ լունգրայի Ասիա-  
կան ընկերութեան մասնակտարանին զրչա-  
զիրներէն։ — Պրակր վկայիցն նիկումիդաց-  
ոց։ — Գրիգորի Արանցելագործի։ — Նի-  
կողայոսի Մշտառնի։ — Վարք և խառաց  
հարցն Եղիպատացոց։ — Սրբոյն Բասիլիո-

1. Փիլիպպոսի առաք. վկ. որ յերկոտառանիցն  
էր, և քեռն խրոյ Մարիամի, և Բարթողոմէո-  
սի, որ մի էր յԵւթանասնից։ — ՃՃ. Բ. Գ.  
ԻԴ. ԻԹ։

2. Գրիգորի Աքանչելագործի վարք։ — Ճ. Ա.  
Ուկեփ. ԺԸ։

3. Նիկողայոսի հայրապեաի վարք։ — ՃՃ. Ա.  
Բ. Գ. Ե. ԻԴ. ԼԳ։

4. Համանուն երկասիրութիւն, կրկին թարգ-  
մանութեամբ, ըստ ընտրելագոյն տպագրու-  
թեան 1886 ամին։

սի, զրեալ յԱմֆիկոքեայ։ — Սրբոյն Ան-  
տոնի, ի սկիզբն հինգերորդի դարու։ —  
Սրբոյն Փաւոյայ, աշակերտի սրբոյն Ան-  
տոնի։ — Սիմեոնի սիւնակեցի, համա-  
նան հրատարակելոյն յԱստեմանեայ յիւրում  
Արեւելեան մասնաշանարանի։ — Եւագրի  
պունացոյ վարք և քաղաքալարութիւն։ —  
Գրիգորի Անձիանձու։ — ի սրբոյն Գրիգորէ  
Կեսարու։ — Գրիգորի Լուսաւորլի։ —  
Յակովրայ Մծրեայ։ — Ասերայ (Արզմե-  
նի) որդու Ղեւեայ, և այն և այն։  
(Ճարաշարելի)

5. Բարտողի կեսարացւոյ վարք, Եշղագիոսէ  
արքեպիսկոպոսէ կեսարու։ — ՃՃ. Ա. Բ. Ե.  
ԺԶ. ԺԸ. ԻԴ. ԻԸ։

6-10. Հարտոնց վարք։ — 11 Գրիգորի Աստաւ-  
ծարանի վարք. Այսաւը հրաւիրեաց զմեզ։ —  
Ճ. Ա. — Աստուածահանոյ և մեծ վարդապետն։ —  
Ճ. ԻԸ. 11 Ասերայ։ — ՃՃ. Բ. Գ. ԼԳ։



## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՆՏՐԻ ՑԱՐԵՒԵԼՈ

(Տես յԷջ 160)

### ԻԵ

Մեկնուն յԵրեւան։ — Գիշերային ձանապարհորդորիւն։ — Հրաշալի տեսիլ Ա-  
րարատ լերին։ — Երեւան հասնելին։ — Համբարձում Գեորգեան մեր նոր բնկերը։ —  
Մարդարաց պաշտը. — Վառաձափողոյն մզկիկը։

24 Յունիս. — Արևմտից ժամանակ պիտի  
մենիմք այսօր գետ յԵրեւան. ցերեկուան  
տարէն ու մժիմներէն չնեղուելու համար՝  
կ'ուզենք գիշերը ճանապարհորդել։ Հարիւր  
յիսոն վերաս նամբայ կայ այս երկու քա-  
ղաքաց մէջ, զոր մի անգամով կը փափաքիմք  
կտրել անցնիլ. և այս խորհրդով վարձեցինք  
եռաձի կառք զմեզ տանելու, և քառաձի սայլ  
մը մեր բնաներու համար։

Միք ընտիր ասպնջականաց հրաժեշտի բա-  
րել տարէն եսքը՝ կառք կը նատինին, երե-  
կոյեան ժամը վեցին, կտեռնին երկու յա-  
փաք կառքին այ ու ձափի կողմանէ մեր ըն-  
կերելու, զլիսէն մինչև ոտու ընին. սպիտակազ-

գեստք. ձիերնուն զլուխներն ալ ու բովան-  
դակ մարմինը կարմրագոյն պատառով մը  
ծածկուած, որպէս զի տաքէն ու շանանան-  
ներէ չնեղուելն։ Կ'անցնիմք հողարլուրներով  
ու բրածներով լի ընդարձակ վարչտ մը։

Արևմտեան կողմը՝ կը խնարծի արեգակն  
ի թիկանց Այրարատաց Փանին մը վայրկենի  
համար՝ այդ հսկայ լեաը կարծես թէ պայ-  
ծառագեղ ծիրանի պատուանով մը ծած-  
կուած է, և ամել եօթնին զեռ. եւս իր ամէն  
պայտառութեամբ կը փայլի գերան գտազ-  
թանց վրայ, իրու վերջին հրաւիրք մը մարդ-  
կային խորհրդատութեանց, ու մէկին կ'ան-  
հետանայ, իրարու բոլորսին աննման լուսե-

գէն հետոցը նշաններն ձգելով ետևէն, որոնց մէջ կը պարուրի ու հրաշափառազոյն գեղ և պայծառութիւն մ'ալ կ'առնու աստուածաշնչի այդ նուրբական լեռը։ Աւելի յաղթ ու անշարժական կը թուի մեղ այն ժամուն՝ աշխարհի այդ սահմանն. աշխով կը նկատենք առ կողիցը վրայ տարածուած անոյ լուսոյ զօնը, ու գագաթը ամենասամառուր պահտակութիւն մը, ուր աւանդութիւն նոյեան տապանին կայսը կը ցուցնէ։ Խիստ լաւ կը հասկըցուի թէ ինչպէս այս զարմանալի կայտը՝ որ գարթ դաշտի մը մէջ յանկարծակի հինգ հազար մետր վեր կը բարձրանայ օդոյ մէջ, ամէն ժամանակ իր մեծ հիացողներն ու նեցած է իրրու աննկուն արհաւիրը մը նկատելով ջայն։ Հայերը անկարելի և անհնարին կը համարին Արաբատայ գագաթին վրայ ելնելը։ Ե կ'ըսն թէ միայն վայրենի խոյք սուրընըն հետքը կրնան ձգել այդ մարդուս անմատելի բարձանց ձեան վրայ։

Երիվանը արագարար կը սուրան առաջ տանեւով կառքերնիս, և մենք նոյն պահուն այդ եղական տեսարանն նկատելու բարեբաստութիւնն ունինք, որոյ դիմաց լաւազոյն կը զգանք ինքողինքնիս երբ երախտագէտ սրտին և հոգով կը պահան միաբ առ արարիչն և սաեղծող ամէն հրաշաբաց։

Կայսէն կայսն չափարք և երիվարք կը փոխուին. անլուսին բայց պայծառ գիշը մը կ'անցնենք մրափելով։ Առաօտեան երեքին կը հասնիք ի Պաշ-Նորաբէն, զոր կը զուշակենք յանակնկալ յարձակմանէ նոյն գեղին համբաւեալ մէեղաց անգութ և ոուր խայթուածքէն։ Ջնոց անգամ անհանդուրելի են այդ խաթը, անակէ որ գիշերուան մթութեան մէջ կը խոտրին սուրալով ճամրուն ուղղութեանը հակառակ ընդարձակութեան մէջ։

Առաօտեան ժամը չորսուկիսուն՝ արշալոյսը կը սկսի պահտակացնել զերինս և զդաշտորէս, ու վեցին կը մտնենք Սատարակ գիշը, ուր իսկոյն գետին կ'իմեմ սոսուըներուա թմրածութիւնը ողեաւորելու, և թէյ մը առնորով վրայէս փոշիները թօթափերու, որոնց թանձութեանը տակ գրիթէ կորսուածի պէս եմ։

25 Յունիս. ի Սադարակէ մինչ ի Դամալու հողակարաց բազմութեան կը հանդիպնիք, որոնք նամբաները կը շտկեն և պէտք տեսնուած նորոգութիւնը կ'ընեն։ Վերջին գիշըն շրջակաբը՝ մանուշակ հիրիկ ծաղկօք գաշտին երեսը ծածկուած է։

Կայսրանին զիմաւորը չուցեր մեզի ձի տալ, պատճառելով թէ թղթատարին հասնելուն պէտք է սպասէ՝ առաջին իրաւունքն

իրենը ըլլալով։ Որպէս զի այս անազանմանը օգտուինք, պտոյս մը կ'ընենք գիւղին չոր կողմը, ուր բազմաթիւ բոյնք են արագի թանոյ, այրելի նիւթոց բարձանց վրայ գրուած, և մեծապէս հետապնելի տիսօք բովանդակ Հայաստանի մէջ յարգի են արագիք. զրեթէ ամէն տուներու վրայ բոյներնին գրած են. և շատ են այս երկայնան պանդուաներու վրայ յօրինուած ժողովը գական քերթուածք։ Ահաւասիկ և անոնցմէ մին, զոր թարգմաներ է Հ. Ալիշան։

Արագիլ, բարով եկիր,  
Դուն արագիլ, բարով եկիր.  
Ըմե զարնան նըշան բերիր,  
Դու մեր սըրափկ զըսրաթ արիր։  
Արագիլ, մեզի իշիր,  
Դուն արագիլ, մեր տուն իշիր,  
Մեր խացի ծառին բունիր,  
Դու մեր սիրուն։  
Արագիլ քի գանգըսիմ,  
Հայ արագիլ, քի գանգըսիմ.  
Իմ հազար ցաւեր սախմ  
Սըրըն ցաւեր, հազար ցաւ...  
Դիմենք նաեւ բնագրին մէջ գրուած զաղղիբերէն թարգմանութիւնը.

Bienvenue à toi, cécogne,  
Toi, la cécogne bienvenue!  
Tu nous a apporté le signe du printemps.  
Tu as rendu la gaieté à notre cœur.  
Descends, ô cécogne, sur notre toit,  
Fais ton nid sur notre frêne,  
Toi, notre amie chérie.  
Cécogne, je me plains à toi;  
Oui, ô cécogne, je me plains à toi,  
Je veux te dire mes mille ennuis,  
Les mille chagrin de mon cœur, etc.

Զերմաշափը սոսուերի մէջ քառասուն աստիճան կը ցուցընէ. արդէն քանի մը օրուընէ ի վեր այդ է օդին բարեխառնութիւնը որոյ մէջ գտնուելու արիկին մէջ ենք կիցիք ու այրու երաքական մը անդարձարձութիւնը հողոյն վրայ այնափ սաստիկ է որ մեր աշքերը չեն կրնար գիմանալ. կը բանագատուինք գտանալ ի կայսրանն և սպասել թըլթատարին, որ վերջապէս կը հասնի ազատել զմեզ այդ անտանելի սպասելին։

Երկու ժամէն եաքը կառքերնիս կը հացընէ զեղ ի հանգոյցն Գամարլուի, որոյ բընակիչը, թաթարը և Ասորիք, քի մը աւելի կրթուած կը ուուին կայսրանի պիտառ պաշտօնին սպանալով որ հոն դրուած բովայ գրին մէջ իրեն գէմ գանգասանիս կը

նշանակինք, կը յաջողինք ինչուան Երեւան երթարու համար պէտք եղած երիվարերն առնուլ:

Գամարլուէ մինչեւ այս վերջին քաղաք, գեղեցիկ է ճանապարհը, շրջապատեալ հասրաւա մշակութեամբ ծխախոսի, ըրնձոյ, բամբակի և այգեաց: Գիւղերն բոլոր բարգաւաճ վիճակի մէջ, և ուրիշ անդ մը չանադիացաց այս ճանրուան վրայ տեսնուած գործունեւթեան մեծ շարժման անթիւ առյօր և անհամար կարւանք կը յառաջին զէպ յԵրեւան:

Թիշ ետքը կը նկատեմ պարսկական հին քաղաքին ամրողութեան կոյտը, ուր կը բարձրանան բարձր միթրայք և ամենագեղեցիկ յախճապահօք զարդարուն գմբէթիք: Երեկոյեան ժամը վկիցին՝ քաղաքէն ներս կը մըտնենք, չին թաղը Զանդի գետոյն ափանց վրայ նկարագեղ, կը ներկայանայ աշխիս, և կառցերնին թիշ մ'ալ անդին յառաջին եւտքը լուսնին հիյանցին դէմ կանդ կ առնու, որ միակ օրինաւորն և նշանին է ի քաղաքին: Կարգէ դուրս է յոգնածութիւննին և քաշած նեղութիւննիս, բայց թիշ մը հանդիսու ու թիթեւ արդուզարդ անոնց հետքն անդամ չի թողուր, ու ամեն բան կը մոռցընէ:

26 Ցունիս. — Ամեր Յովհաննէ թարգմանին ճամբայ տարով, որ անբաւականութեամբն ալ անհանդուրժեցի եղած էր, ամուսինս ետևէ եղաւ անոր տեղով մէկը զտնելով՝ Արարատ լերան վրայ ելլելու, որ մեր ճանապարհորդութեան զլխաւոր նկատակինքին մէկն էր, կարաւանի մը Հարկանի հանդիքը, ձանքն պատրաստնի Երեւանի քաղաքապետն Նալիքով զօրապետին իր առջի այցելութիւնն ըրսու, որ արդէն շատոնց մեր այն կողմէրէ անցնելուն տեղեկալութիւնն առած էր, և մեծապէս սիրայիր ընդունելութեամբ պատուասիրեց: Իմանալով ամուսնոյս մտածութիւններն ու փափաք, յանձնառու եղաւ տեխն այն կողմերը լուր զրիելու, որպէս զի անոնց գործադրութիւնն արգելիք մը շանդիպի, ու հրաբորեց որ մեր ի գարձնին քանդ մը օր իրեն հիւր ըլլանք ի Դարաշիշակ:

Երբ թարգման մը գտնեւու մեծ հոգի և մտածութեան մէջ էինք, և ահա կ'իմասնանք թէ երեւանեցի հայ մը, Համբարձում Գէորգեան, եկեր հիտերնիս տեսնուիլ կ'ուզէ: Աշխայդ ու զոււրթ երիտասարդ մը, որ ներկայանալուն պէտք ընտիր գաղղիերնով կիմացընէ թէ քանի մը տարի Մոնաքիլէ կեցած և լաւ ընդունելու տեսան ըլլայով, կը փափաքի իր կողմանէ օգտակար ըլլալ Քաղղլացոյ մը, ուստի ինքզինքը բուրոցին մեր արամուգրութեան ներքեւ կը ձգէ: « Ձեր

թարգմանն ըլլամ: կ'ըսէր, և եթէ կը հաճի՛ ուղայ ընկեր»:

Որակի անակնկալ, բայց միանգամայն այնչափ գարմանալի չէր առաջարկութիւն՝ հարուստ երկագործի մը համոր, որ ազատ էր մինչև այգեկիթոց ժամանակ, և վատաւած Արարատայ բարձունքը տեսնելու վաֆակով: Թէ աշէսն ամասնին գժուարութիւն առաջընէր անոր առաջարկին ընդունելու, առ ժամանակ կեց եռանիքամն մը արտայատութիւն համարելով, բայց պարոն Համբարձում Գր հաստուուն մնաց որոշմանը վրայ, և խօսք տուու: Մեր այս կարեւոր խնդրոյն որոշուելին ետք ուրիշ բան չէր մնար՝ բայց եթէ կարաւանը պատրաստել, և քաղաքին տեսնելու արժանաւոր տեղեաց այցելութիւնին կատարելու Երեւան, որոյ արտաքին կերպարանք միշտ պարսկական մնացած է, իրուահայաստանի կառավարութեան զիխաւոր տեղին է, և Երախոսոյ Եռանագաշտին մէջ երկրորդ մեծ քաղաքը: Մեծ է կարեւորութիւնը թէ վաճառական տեսակիտով և թէ ուազմազիտական դիրքով: Չեմ ուզեր միւսանդամ անոր նկարագրութիւնն ընել, ինչ որ յայլոց արդէն տրուած է և յաճախ:

Թաթարաց բնակարանաց և տուներու ներքին ճոխութեանց շատ տեղ ականատեսք, Երեւանի Սարդարաց արքունեաց տեսիլը նոյն պալատորութիւնը պիտի շնչէր վրանինին որ անոր վրայ առաջին փորձը տեսնող ճանապահիորդաց: Բայց հարկ է և զայն ըստել, թէ պալատին զարդարանքը շատ տեսպեննակն է, մանաւանդ դիրքովը՝ ժայռի մը վրայ, Զանգիի ափանց վրայ, Հարշալիք մը կրնայ համարուիլ: Բայց ի ստորին յարկէն, երկրին հին փոխարքայից արքունեացը մեծ սրահին մէջ ուրիշ բան չի տեսնուիրը բայց հայելիք և նկար. ուր մեծամեծ շրջանիներու մէջ առնուած են պատկերը պարսկացին նախկին դիւցազանց, ինչպէս նաև Նատրշահի և Ալպաս-Միրզայի Ռէրիշ պատկերներու ալ կը ներկայացընեն պատերազմիկ արշաւանք և որսորդաց քաղաքործութեանց տեսասակ:

Արահին աւալայատակին մշշտեղը՝ ճերմակ մարմարինէ աւազան մը կայ, այսօրուան օրոյ պարակ և լուռ, ուստի Երեւան սարդարաց փառաց ու բարգաւաճ տաենին կը ցայտէր անշուշան ջինը ու բարիհամ ջուր, ասիական իշխողին հանոյք և զուարձութիւն պատճենուիլ, երբ երկնացած իր բազմոցին վրայ ու ծխափառը ձեռքը, կը լուր Զանդի գետոյն ինունիլը, և այգին դիմաց ունէր Արարատայ փառաւոր մեծ փայելչութեան տեսարանը:

Սարդարաց բնակութենքն կ'անցնինք վաս-  
ճառանոցին մէջ կառացուած մեծ մզկիթը  
տեսնելու, որուն մուաքը շղթայով մը փա-  
կուած է, և դիմացը բազմաթիւ զուրանի,  
համորիչներու և իրենց կրօնիցը պատկանող  
նիւթոց վաճառականք։ Փանի մը բանի գինը  
կը հարցընենք, բայց ժխտական կերպով գը-  
լուխնին կը լարեն։ չեն ուզեր որ քրիստո-

նէի ձեռք իյնալով անարգուին։ Հովանա-  
սոտուեր ներքին գեղեցիկ գասիթ մը ունի այս  
մզկիթը, ուր շրու անկիւնը անկուած նոյնաթիւ  
նոյնուն ժառեր բաւական են ի ծածկել ի-  
րենց թանձը շուքով այդ ընդարձակ գասի-  
թը, որուն շրջաբոլորը տղայոց դպրոցներ  
շնուռած են։

(Շարայարելի)

## ՊԱՄՓԻՒԼԵԱՆ ՕՐԻՆԱԿ

### ՍՈՒՐԲ ԳՐՈՅ



արգմանամշաց նամար կը կարդամք՝ թէ երր  
Աստվածաշուն գոց թարգմանութեամ համար՝  
սրբոյ Մահակայ և Մեսրովկայ՝ իմեմց վարդա-  
պետաց յամթարարականա առ Աստիլիս հայ-  
րապետ կը նասեէմ ի Կոստամիւտոպոլիս, ար-  
քութիւն հրամանաւ կը բացուէմ իրենց առջրը  
կայսերական գամճառասաթ դրմերը, ուր կը պա-  
նուէմ նասերեայ կենարացւոց ձեռքով հոռ փո-  
խադրուած Պամիկիւլամ ըմտիրեացոյ յումակամ  
գրչագիրը սուլը Գորց, որոց վրայէմ կատարու-  
ցաւ ույն թարգմանամշաց ձեռքով հայկակամ, ամմը-  
ման թարգմանութիւմ։

Հետևեայ հիտաքմթամակամ հասուածմ՝ գրեր է  
Կոմիքիր հայերէմազէտ, և հրատարակեր բա-  
մափրակամ համաշխի մէջ (Journal of Philo-  
logy, Հատ. 14), յորմէ թարգմանարար կը բա-  
ղներ հետևեալ տեղեկութիւնները, թէպէտ տեղ  
տեղ ոչ այնչափ միջը։

Թիրտանական մուսէռնին մէջ հայկական  
գրչագիր մը կայ՝ առաքելական Գործոց և  
Թղթոց, Add. 19, 1730 թուանինով, որ այլ  
և այլ տեսակիտով՝ մոտադրութեամ արժանաւ  
ուր կարեւորութիւն ունի։

Եւ նախ՝ գրաւթեան ժամանակաւը, որով-  
հեակ գրչագրուած է ի Թորոս դպրէ, ինչպէս  
կը տեսնուի ի վերջ Յայտնութեան գրոց գը-  
րուած յիշատակարանին մէջ, Հաւանականա-  
րար մի և նոյն համանուն անձն է Էլմիրանի  
մատենադարանին 149 թիւ Աստուածաշնիք  
գրչագրողը, և այս դէպքին եթէ սույգ է են-

թադրութիւնն, Բիրիտանական մուսէռնին գոր-  
շագիը՝ գրեթէ Քրիստոսի 1270 թուականին  
զրուած կ'ըլլայ: Երեքտասաններորդ գարու  
մէջ գրուած աւետարանք բազմաթիւ են. սա-  
կայն Պրակե, Առաքելական Թուղթք և  
Յայտնութեան գիրը պարունակողներն սա-  
կաւաթիւք. պարիսեան ազգային մատենա-  
դարանին մէջ կը պահուի օրինակ մը ներսիսի  
Լամբրունեցւոյ ձեռքով ի նմին դարս գրուածի՞,  
զուգահեական մինակներով ի կրկին լեզու,  
ի կայ և ի յոյն: Մի և նոյն թորոս կ'երե-  
նայ Մրցն Ղապարո մատենադարանին եր-  
կու գրչագիր աւետարանաց ընդօրինակողը,  
որոնք 1262 և 1274 թուականները կը կրեն.

Բիրիտանական մուսէռնի գրչագրին մէջ  
նոր կատարանի գրոց զասաւորութիւնն ալ՝  
մասնաւորութիւն ունի, և յայտնապէս կ'ե-  
րեւան թէ զրբը մէջ պէտք էին ամփոփուած  
ըլլալ նաև շրու աւետարանք. բայց ասոնք  
առաջիններէն զատ և իրու որիշ մասն կազ-  
մելով: Խոկ մեր առջեւ եղած գրչագրին մէջ  
նոր կատարանաց միւս գրեբըն հետեւալ  
կերպով կը դասաւորուին: Ա. Յայտնութիւն. —  
Բ. Հանդիստ Յովիկաննու. — Գ. Կրկին թուղ-  
թեր Պալոսոսի առ Թեսաղոնիկեցիս. — Դ. Առ  
Երբացւցիս. — Ե. Առ Տիմոթէոսն Փիլիպոն. —  
Զ. Գործք առաքելոց. — Լ. Կաթուղիկէ թուղ-  
թեր: — Յառաջ քան զԳործք առաքելոց  
գրուած է նատարկութիւն Պատրոսի խորագրով  
գրուած մը պապ առաքելոց ցուցակ մը՝ Հան-  
դերէ համառու տեղեկութեամբ ամեն մէ-  
կուն վարուց և մահուան:

Երբայի տղիքը՝ որ տպագրուած է ամեն  
հայ աստուածաշնիք գրոց մէջ, ի գրչագրի  
14